# 1.4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

## 1.4.1. Զբաղվածություն

*Տնտեսապես ակտիվ բնակչության կազմը, հունվար-սեպտեմբերին*

| Գնահատական | Տնտեսապես ակտիվ բնակչություն*, *մարդ* | այդ թվում՝ | | Գործազրկության մակարդակը**, % |
|---|---|---|---|---|
| | | զբաղվածների թվաքանակը, *մարդ* | պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը, *մարդ* | |
| 2009թ. | 62078 | 58647 | 3431 | 5.5 |
| 2010թ. | 62363 | 58883 | 3480 | 5.6 |
| 2011թ. | 62148 | 58808 | 3340 | 5.4 |
| 2012թ. | 62873 | 59902 | 2971 | 4.7 |
| 2013թ. | 63305 | 60733 | 2572 | 4.1 |

*Զբաղվածների և պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակների փոփոխությունները*

*%-ով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ*




*Աշխատուժի առաջարկն ըստ ամիսների*

/ամսվա վերջի դրությամբ/

| | Աշխատանք փնտրողներ | | նրանցից՝ չզբաղվածներ | | որոնցից՝ գործազուրկներ | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընդամենը, մարդ | 2012թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, մարդ | 2012թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, մարդ | 2012թ. նույն ամսվա նկատմամբ, % |
| հունվար | 3186 | 92.0 | 3182 | 92.1 | 2944 | 89.8 |
| փետրվար | 3192 | 92.7 | 3188 | 92.9 | 2949 | 90.5 |
| մարտ | 3200 | 93.1 | 3196 | 93.1 | 2955 | 90.9 |
| ապրիլ | 3195 | 94.3 | 3191 | 94.3 | 2942 | 92.2 |
| մայիս | 3079 | 92.9 | 3077 | 92.9 | 2822 | 90.6 |
| հունիս | 3042 | 92.2 | 3042 | 92.3 | 2789 | 90.5 |
| հուլիս | 2955 | 89.5 | 2953 | 89.6 | 2702 | 88.7 |
| օգոստոս | 2893 | 88.8 | 2891 | 88.9 | 2645 | 87.8 |
| սեպտեմբեր | 2872 | 89.4 | 2870 | 89.5 | 2572 | 86.6 |

*Կին աշխատուժի առաջարկն ըստ ամիսների*

/ամսվա վերջի դրությամբ/

| | Աշխատանք փնտրողներ | | նրանցից՝ չզբաղվածներ | | որոնցից՝ գործազուրկներ | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընդամենը, *մարդ* | 2012թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, *մարդ* | 2012թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, *մարդ* | 2012թ. նույն ամսվա նկատմամբ, % |
| հունվար | 3086 | 94.1 | 3033 | 92.7 | 2850 | 91.2 |
| փետրվար | 3038 | 93.0 | 3035 | 93.1 | 2852 | 91.6 |
| մարտ | 3039 | 93.2 | 3036 | 93.2 | 2854 | 91.8 |
| ապրիլ | 3038 | 94.3 | 3032 | 94.4 | 2849 | 93.2 |
| մայիս | 2955 | 93.7 | 2949 | 93.6 | 2762 | 92.5 |
| հունիս | 2933 | 93.7 | 2933 | 93.8 | 2742 | 92.6 |
| հուլիս | 2858 | 91.4 | 2853 | 91.3 | 2669 | 91.1 |
| օգոստոս | 2813 | 91.0 | 2808 | 90.9 | 2625 | 90.4 |
| սեպտեմբեր | 2774 | 90.9 | 2772 | 90.9 | 2536 | 88.5 |

** Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն իրենից ներկայացնում է զբաղված և պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումար: Զբաղված բնակչության թվաքանակի հաշվառումը կատարվել է վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից ստացվող պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, ինքնազբաղվածների (ներառյալ գյուղական տնտեսություններում զբաղվածները, ինչպես նաև շրջկենտրոնների բնակչությունը) թվաքանակի գնահատման հիման վրա:*

*** Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ:*

2013թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում զբաղվածների թվաքանակից 81.4 տոկոսը կամ 49435 մարդ վարձու աշխատողներ են (ներառյալ անհատ ձեռնարկատերերը), իսկ 18.6 տոկոսը կամ 11298 մարդ՝ հանդիսանում են ինքնազբաղվածներ, մասնավորապես գյուղատնտեսությունում:

*Զբաղվածների (վարձու աշխատողների) միջին ցուցակային թվաքանակն ըստ տնտեսության ճյուղերի*

/մարդ/

| | 2012թ. հունվար-սեպտեմբեր | 2013թ. հունվար-սեպտեմբեր | Բացարձակ հավելաճը (նվազումը «–» նշանով) | 2013թ.հունվար-սեպտեմբերը 2012թ.հունվար-սեպտեմբերի նկատմամբ,% |
|---|---|---|---|---|
| ***Ընդամենը*** | ***48604*** | ***49435*** | ***831*** | ***101.7*** |
| Արդյունաբերություն | 5701 | 6147 | 446 | 107.8 |
| Գյուղատնտեսություն | 4093 | 4139 | 46 | 101.1 |
| Անտառտնտեսություն | 200 | 190 | -10 | 95.0 |
| Շինարարություն | 4007 | 3551 | -456 | 88.6 |
| Տրանսպորտ | 808 | 804 | -4 | 99.5 |
| Կապ | 1235 | 1134 | -101 | 91.8 |
| Առևտուր | 4915 | 5344 | 429 | 108.7 |
| Բնակկոմտնտ. և կենցաղսպասարկում | 2354 | 2650 | 296 | 112.6 |
| Առողջապահություն | 2508 | 2520 | 12 | 100.5 |
| Սոցիալական ապահովություն և ապահովագրություն | 112 | 117 | 5 | 104.5 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 214 | 205 | -9 | 95.8 |
| Կրթություն | 9438 | 9460 | 22 | 100.2 |
| Մշակույթ և արվեստ | 1506 | 1575 | 69 | 104.6 |
| Գիտություն և գիտական սպասարկում | 161 | 193 | 32 | 119.9 |
| Ֆինանսներ և վարկ | 664 | 722 | 58 | 108.7 |
| Կառավարում և պաշտպանություն | 9658 | 9675 | 17 | 100.2 |
| Հասարակական կազմակերպություններ | 599 | 560 | -39 | 93.5 |
| Այլ ճյուղեր | 431 | 449 | 18 | 104.2 |

2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության բաժնում հաշվառման են կանգնել 2870 չզբաղված քաղաքացիներ, որոնց 89.6 տոկոսը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Չզբաղված քաղաքացիների թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 10.5 տոկոսով:

*Աշխատուժի առաջարկի դինամիկան ըստ շրջանների*

| | 2012թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | | 2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | | 2012թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ, % | |
|---|---|---|---|---|---|---|
| | աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը, մարդ | որանցից՝ գործազուրկներ | աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը, մարդ | որանցից՝ գործազուրկներ | աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը | որանցից՝ գործազուրկներ |
| ***Ընդամենը*** | ***3212*** | ***2971*** | ***2872*** | ***2572*** | ***89.4*** | ***86.6*** |
| ք.Ստեփանակերտ | 2681 | 2634 | 2331 | 2229 | 86.9 | 84.6 |
| Ասկերան | 48 | 48 | 45 | 45 | 93.8 | 93.8 |
| Հադրութ | 82 | 80 | 72 | 70 | 87.8 | 87.5 |
| Մարտակերտ | 121 | 45 | 137 | 61 | 113.2 | 135.6 |
| Մարտունի | 128 | 63 | 135 | 68 | 105.5 | 107.9 |
| Շուշի | 77 | 65 | 68 | 51 | 88.3 | 78.5 |
| Քաշաթաղ | 75 | 36 | 84 | 48 | 112.0 | 133.3 |

2013թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակի աճ գրանցվել է Մարտակերտի, Քաշաթաղի և Մարտունու շրջաններում, համապատասխանաբար՝ 13.2, 12.0 և 5.5 տոկոս, իսկ գործազուրկների թվաքանակի աճ՝ Մարտունու, Քաշաթաղի և Մարտակերտի շրջաններում, համապատասխանաբար՝ 35.6, 33.3 և 7.9 տոկոս:

*Աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորումը, 2013թ. հունվար-սեպտեմբերին*

| | Ընդամենը, *մարդ* | նրանցից՝ *կանայք* | Ապահովվել են աշխատանքով | |
|---|---|---|---|---|
| | | | ընդամենը, *մարդ* | նրանցից՝ *կանայք* |
| **Աշխատանք փնտրողներ, ընդամենը** | **2872** | **2774** | **167** | **138** |
| *այդ թվում՝* | | | | |
| զբաղվածներ, *նրանցից՝* | 2 | 2 | - | - |
| կենսաթոշակառուներ (ապահովագրական, տարիքային և սոցիալական ծերության) | - | - | - | - |
| չզբաղվածներ, *այդ թվում՝* | **2870** | **2772** | **167** | **138** |
| կենսաթոշակառուներ (արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, մասնակի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում) *նրանցից՝* | - | - | - | - |
| հաշմանդամներ | - | - | - | - |
| *չզբաղվածներից՝* **գործազուրկներ՝** *նրանցից՝* | **2572** | **2536** | **143** | **120** |
| մինչև 1 տարի աշխատանքային ստաժ ունեցողներ | 12 | 9 | 5 | 3 |
| բանվորներ | 967 | 740 | 14 | 12 |
| առաջին անգամ աշխատանք փնտրողներ, *նրանցից՝* | 286 | 227 | 19 | 15 |
| *շրջանավարտներ, այդ թվում՝* | 156 | 136 | 12 | 8 |
| հանրակրթական դպրոցների | 76 | 71 | 2 | 2 |
| միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների | 65 | 53 | 6 | 3 |
| մասնագիտական-տեխնիկական ուսումնարանների | 15 | 12 | 4 | 3 |

*Գործազուրկների կառուցվածքն ըստ շրջանների 2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ (%)*




2013թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ գրանցված 2572 գործազուրկներից միայն 14.9 տոկոսն են հանդիսանում նպաստառու, որոնց թիվը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 58-ով կամ 17.9 տոկոսով:

*Գործազուրկների և նպաստառու գործազուրկների*
*թվաքանակների դինամիկան ըստ շրջանների*

/*մարդ*/

| | Գործազուրկների թվաքանակը | | այդ թվում՝ նպաստառու | |
|---|---|---|---|---|
| | 2012թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | 2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | 2012թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | 2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ |
| ***Ընդամենը*** | ***2971*** | ***2572*** | ***324*** | ***382*** |
| ք.Ստեփանակերտ | 2634 | 2229 | 214 | 272 |
| Ասկերան | 48 | 45 | 18 | 14 |
| Հադրութ | 80 | 70 | 10 | 11 |
| Մարտակերտ | 45 | 61 | 24 | 19 |
| Մարտունի | 63 | 68 | 11 | 15 |
| Շուշի | 65 | 51 | 21 | 13 |

| Քաղաքաղ | Գործազուրկների թվաքանակը | | այդ թվում՝ նպաստառու | |
|---|---|---|---|---|
| | 2012թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | 2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | 2012թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | 2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ |
| Քաշաքաղ | 36 | 48 | 26 | 38 |

*Գործազուրկների և նպաստառու գործազուրկների դինամիկան ըստ ամիսների (ամսվա վերջի դրությամբ,մարդ)*




2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ կանայք կազմում են պաշտոնապես գրանցված գործազուրկ քաղաքացիների 98.6 տոկոսը: Գործազուրկ կանանց մեծամասնությունը՝ 56.4 տոկոսն ունի միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն և պատկանում է 30-50 տարիքային խմբին՝ 60.6 տոկոսը:

*Գործազուրկների տարիքային և կրթական կազմի վերաբերյալ տվյալների դինամիկան ըստ սեռի*

*/մարդ/*

| | 2012թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | | | 2013թ. սեպտեմբերի վերջի դրությամբ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընդամենը | կանայք | տղամարդիկ | ընդամենը | կանայք | տղամարդիկ |
| **Ընդամենը գործազուրկներ** | **2971** | **2867** | **104** | **2572** | **2536** | **36** |
| *այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի* | | | | | | |
| մինչև 18 | - | - | - | - | - | - |
| 18-22 | 53 | 48 | 5 | 51 | 48 | 3 |
| 22-30 | 1099 | 1044 | 55 | 706 | 694 | 12 |
| 30-50 | 1252 | 1239 | 13 | 1545 | 1538 | 7 |
| 50 և բարձր | 567 | 536 | 31 | 270 | 256 | 14 |
| *ըստ կրթության* | | | | | | |
| բարձրագույն | 468 | 433 | 35 | 340 | 334 | 6 |
| միջին մասնագիտական | 1082 | 1027 | 55 | 715 | 706 | 9 |
| միջնակարգ (լրիվ) ընդհանուր | 1353 | 1345 | 8 | 1445 | 1430 | 15 |
| հիմնական ընդհանուր | 68 | 62 | 6 | 72 | 66 | 6 |

*Աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորման կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի 2013թ. հունվար-սեպտեմբերին (%)*




*Աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորումը ըստ շրջանների 2013թ. հունվար-սեպտեմբերին (%)*




Ըստ շրջանների աշխատանքի տեղավորված և աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակների հարաբերակցությունը գրաֆիկորեն պատկերված է ստորև.

*Աշխատանքի տեղավորված քաղաքացիների թվաքանակը աշխատանք փնտրող քաղաքացիների ընդհանուր թվաքանակի նկատմամբ ըստ շրջանների (%)*



## *1.4.2. Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը, աշխատավարձ և այլ եկամուտներ*

*Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը*

Բնակչության դրամական եկամուտները 2013թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 97061.2 մլն դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են 7.0 տոկոսով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 96331.1 մլն դրամ և ավելացել են 6.4 տոկոսով: Դրամական եկամուտները գերազանցում են ծախսերին 730.1 մլն դրամով:

*Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը*

*/մլն դրամ /*

| | 2012թ. հունվար-սեպտեմբեր | 2013թ. հունվար-սեպտեմբեր | Բացարձակ աճը, (նվազումը «-» նշանով) | 2013թ. հունվար-սեպտեմբերը 2012թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|---|
| Բնակչության դրամական եկամուտները | 90700.2 | 97061.2 | 6361.0 | 107.0 |
| Բնակչության դրամական ծախսերը | 90570.0 | 96331.1 | 5761.1 | 106.4 |
| Եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ | 130.2 | 730.1 | 599.9 | 5.6անգ. |

*Բնակչության դրամական եկամուտներն ըստ աղբյուրների*

*/տոկոսներով /*

| | 2012թ. հունվար-սեպտեմբեր | 2013թ. հունվար-սեպտեմբեր |
|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | **100.0** | **100.0** |
| այդ թվում՝ | | |
| Աշխատանքի վարձատրություն | 52.7 | 54.7 |
| Սոցիալական և այլ տրանսֆերտներ | 18.1 | 17.0 |
| Եկամուտներ գյուղմթերքների իրացումից | 15.1 | 14.7 |
| Եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից | 7.7 | 7.3 |
| Այլ եկամուտներ | 6.4 | 6.3 |

Բնակչության դրամական եկամուտների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենաբարձր տեսակարար կշիռն ունի աշխատանքի վարձատրությունը՝ 2013թ. հունվար-սեպտեմբերին՝ 54.7 տոկոս, 2012թ. հունվար-սեպտեմբերին՝ 52.7 տոկոս:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2013թ. հունվար-սեպտեմբերին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 88094.3 մլն դրամ (90.8 տոկոս), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 5134.0 մլն դրամ (5.3 տոկոս):

*Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը*

*/տոկոսներով /*

| | 2012թ. հունվար-սեպտեմբեր | 2013թ. հունվար-սեպտեմբեր |
|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | **100.0** | **100.0** |
| *դրանցից օգտագործվել են՝* | | |
| Ապրանքների գնման | 77.7 | 77.5 |
| Ծառայությունների վճարման համար | 13.3 | 13.3 |
| Պարտադիր վճարների և զանազան այլ մուծումների համար | 5.8 | 5.3 |
| Ավանդների և արժեթղթերի ձեռով խնայողությունների հավելաճ | 5.0 | 2.2 |
| Վարկերի դիմաց պարտավորությունների փոփոխություն | -3.9 | -1.7 |
| Այլ ծախսեր | 2.0 | 2.6 |
| Կանխիկ դրամի աճ (+) կամ նվազում (-) բնակչության ձեռքին | 0.1 | 0.8 |

*Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներ:* Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2013թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 88052.9 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 3.0 տոկոսով:

## *Աշխատանքի վարձատրություն**

2013թ. հունվար-սեպտեմբերին, համաձայն վիճակագրական տեղեկություններ տրամադրողների տվյալների և առանձին ոլորտների համար կատարված լրահաշվարկի, տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 108606 դրամ և նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատությամբ աճել է 7.2 տոկոսով: Ընդ որում՝ բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 123459 դրամ և աճել է 12.7 տոկոսով, իսկ պետական ոչ առևտրային և ոչ պետական առևտրային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար՝ 98077 դրամ և աճել 2.8 տոկոսով:

Միջին ամսական անվանական աշխատավարձի տատանումն ըստ տնտեսության ճյուղերի և փոփոխությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ բնութագրվում է ստորև բերված տվյալներով.

### *Միջին ամսական անվանական աշխատավարձը*

*/դրամ/*

| | 2012թ. հունվար-սեպտեմբեր | 2013թ. հունվար-սեպտեմբեր | այդ թվում՝ | | | 2013թ. հունվար-սեպտեմբերը 2012թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, % | Միջին հանրապետականի նկատմամբ, % |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում | ոչ առևտրային և առևտրային կազմակերպություններում, որից՝ | | | |
| | | | | պետական հատված | ոչ պետական հատված | | |
| ***Ընդամենը*** | **101346** | **108606** | **123459** | **85929** | **102509** | **107.2** | **100.0** |
| Արդյունաբերություն | 105861 | 115156 | - | 89579 | 127309 | 108.8 | 106.0 |
| Գյուղատնտեսություն | 84577 | 84590 | 82535 | 108088 | 81855 | 100.0 | 77.9 |
| Անտառտնտեսություն | 47783 | 50462 | 50462 | - | - | 105.6 | 46.5 |
| Շինարարություն | 133320 | 141536 | 159778 | 113910 | 143502 | 106.2 | 130.3 |
| Տրանսպորտ | 105362 | 100539 | 114483 | 93766 | 99588 | 95.4 | 92.6 |
| Կապ | 123871 | 128450 | - | 61907 | 162521 | 103.7 | 118.3 |
| Առևտուր | 64266 | 62979 | - | 75351 | 62956 | 98.0 | 58.0 |
| Բնակկոմտնտ. և կենցաղսպասարկում | 70467 | 67099 | 61312 | 68326 | 68048 | 95.2 | 61.8 |
| Առողջապահություն | 76097 | 78887 | 68491 | 84013 | 65751 | 103.7 | 72.6 |
| Սոցիալական ապահովություն և ապահովագրություն | 63022 | 64556 | 60599 | - | 87830 | 102.4 | 59.4 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 44030 | 46928 | 47254 | - | 25000 | 106.6 | 43.2 |
| Կրթություն | 75212 | 73837 | 71100 | 90428 | 71818 | 98.2 | 68.0 |
| Մշակույթ և արվեստ | 58999 | 58174 | 48905 | 72055 | 48000 | 98.6 | 53.6 |
| Գիտություն և գիտական սպասարկում | 58011 | 114569 | 66139 | 61753 | 272196 | 197.5 | 105.5 |
| Ֆինանսներ և վարկ | 199079 | 203008 | - | - | 203008 | 102.0 | 186.9 |
| Կառավարում և պաշտպանություն | 153062 | 185247 | 185792 | 71336 | - | 121.0 | 170.6 |
| Հասարակական կազմակերպություններ | 87137 | 93770 | - | - | 93770 | 107.6 | 86.3 |
| Այլ ճյուղեր | 78248 | 85398 | 59927 | 93205 | 72415 | 109.1 | 78.6 |

Ճյուղային կտրվածքով անվանական միջին աշխատավարձը զգալիորեն բարձր է եղել, հատկապես, վարկավորման և կառավարման համակարգերում, որոնք միջին հանրապետական աշխատավարձի համեմատ կազմել են համապատասխանաբար՝ 186.9 և 170.6 տոկոս:

2013թ. հունվար-սեպտեմբերին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 43.2 տոկոսից (ֆիզկուլտուրա և սպորտ) մինչև 68.0 տոկոսի (կրթություն) սահմաններում:

* *«Աշխատանքի վարձատրություն» բաժնի տվյալները բերված են համաձայն տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների, որտեղ, սակայն, որոշ ճյուղերում նշված աշխատավարձի ծավալները չեն համապատասխանում իրականությանը: Նշված թերությունները հաշվի են առնված բնակչության դրամական եկամուտների հաշվարկներում, որտեղ հաշվետվային տվյալներից զատ կիրառվել է նաև լրահաշվարկ*

*Միջին ամսական անվանական աշխատավարձը ԼՂՀ շրջաններում, 2013թ. հունվար-սեպտեմբերին*

| | Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ | Միջին հանրապետականի նկատմամբ, % | 2012թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ, % | Սահմանված նվազագույն աշխատավարձի նկատմամբ, անգամ |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը ԼՂՀ** | **108606** | **100.0** | **107.2** | **2.4** |
| ք.Ստեփանակերտ | 129114 | 118.9 | 109.5 | 2.9 |
| Ասկերան | 78530 | 72.3 | 102.5 | 1.7 |
| Հադրութ | 71299 | 65.6 | 97.2 | 1.6 |
| Մարտակերտ | 108898 | 100.3 | 107.9 | 2.4 |
| Մարտունի | 68730 | 63.3 | 94.3 | 1.5 |
| Շահումյան | 83909 | 77.3 | 120.0 | 1.9 |
| Շուշի | 75687 | 69.7 | 99.9 | 1.7 |
| Քաշաթաղ | 73700 | 67.9 | 98.0 | 1.6 |

*Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ արտարժույթի տեսակների*

| | *2013թ. դրամ* | *2012թ.նույն եռամսյակի նկատմամբ* | *ԱՄՆ դոլար* | *2012թ.նույն եռամսյակի նկատմամբ* | *Եվրո* | *2012թ.նույն եռամսյակի նկատմամբ* | *Ռուբլի* | *2012թ.նույն եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *I եռամսյակ* | 105872 | 109.2 | 258.56 | 103.6 | 195.69 | 102.8 | 7859.84 | 104.6 |
| *II եռամսյակ* | 109697 | 105.9 | 264.37 | 102.5 | 202.46 | 100.7 | 8361.05 | 104.4 |
| *III եռամսյակ* | 110009 | 106.7 | 269.20 | 107.3 | 203.10 | 101.2 | 8821.89 | 110.0 |

*Միջին ամսական անվանական և իրական աշխատավարձերը 2012-2013թթ. հունվար-սեպտեմբերին*

| | 2012թ. հունվար-սեպտեմբեր | 2013թ. հունվար-սեպտեմբեր |
|---|---|---|
| Միջին ամսական անվանական աշխատավարձ, *դրամ* | ***101346*** | ***108606*** |
| Իրական աշխատավարձը սպառողական գների ինդեքսով, *դրամ* | 99652 | 104029 |

*Սահմանված նվազագույն աշխատավարձի, միջին ամսական անվանական աշխատավարձի և նվազագույն սպառողական բյուջեի հարաբերակցությունը 2013թ. հունվար-սեպտեմբերին*

| | Նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը, % | | Միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերակցությունը նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| | միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ | նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ* | |
| 2013թ. հունվար-սեպտեմբեր | 41.4 | 87.3 | 210.8 |

* *Հաշվարկված ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմով, կառուցվածքով և էներգետիկայով՝ համապատասխան ժամանակաշրջանի միջին ընթացիկ գներով*